Տէմուլինս զուարթ դէմքով անոնց նայելով ըստաւ . Թէեւ ինքը կը մեռնի, բայց իւր տեղը կը թողլու երեք մեծ բժիշկներ որք իրմէն շատ աւելի ճարտար են : Այս խօսքին վրայ ներկայ եղող բժիշկներն անձկանօք կը հարցնէին թէ, «ո՞յք են այն երեքն, յուսալով իւրաքանչիւրն թէ իր ա- նունը պիտի տար : Տիմուլինս գլուխը շարժելով ըստաւ, «Նոքա են Զուր, Աշխատութիւն եւ Ու- տեստ : Կանչեցէք զառաջինն ի ծառայութիւն ան- խարան, զերկրորդն կանոնաւորապէս և զերորդն չափուորութեամբ : Հետեւ եցէ՞ք այս խրատիս, և յայնմաս պիտի կարենաք պատրաստել լաւագոյն դարմաններ : Կենդանութեան ատենս առանց ա- սոնց բան մը կարող չի ընել, և մեռնելու ատեն ասոնք ձեզի բարեկամ անուանելուս մէջ սխալած չպիտի լինիմ, «ո՞վ հաւատարիմ գործակիցք իմ : »

Բէ-բան

ՀՆՉԱԿ

Հնչակ է մեղ ձայնատու ,
Վարք ուղղելու դասատու ,
Իւր խրառուց ունին մատու
Որ կըթուիս , անկիրթ դո՛ւ :


Հնչակ է մեղ ուղեցոյց ,
Մոլոր ճամբան տայ մեղ ցոյց ,
Չարին խորհած չար զեկոյց ,
Մեղ ազդ առնէ և տայ ցոյց :

Հնչակ ունի սուր աչքեր .
Միշտ կը տեսնէ նա դէպքեր .
Եւ իր հնչուն խիստ ձայնով
Ի կարդ կոչէ զանմիտներ :

— Հնչակ է մեր թշնամին . —
Կըսէ անխելք արմարդին
Մինչ իբր յստակ հայելի
Ցոյց տայ զբարս ցաւալի :

Զմիւռին

Ա. Դ.



ՆԱԽԱՊԱՇԱՐՄԱԿԱՆ

ԶՄԻՒՆԻԱԿԱՆ ԱԻՋՆԴՈՒԹԻՒՆՔ

Ղորս ամենայն ջերմեռանդութեամբ քարոզեն
և ուշադրութեամբ կատարեն տիարք թե-
թեսովիկք և խաթունք թեթեամիտք.

Օտարական

1. Մախասին բերանը գոց բռնէ որ տիւշ-
մանիդ զըլըճը գոց մնայ: (Բոժոժիկ. — Ասա-
ռուած շատ քաշել չխտայ:)

2. Գիշերով ջուրի վրայէ անցնելու ատեն
Յիսուս Քրիստոս ըսէ, ապա թէ ոչ չարբըւ-
միշ կըլլաս: (Բոժ. — Վէսէլամ.)

3. Թշնամիներէդ ջի բամբասուելու համար
եղունքներդ մի՛ նետեր: (Բոժ. — Պէրէքէթ
է ըսելով՝ գրապանդ դիր պահէ:)

4. Սուտ երդում թէ որ ընելու ըլլաս՝
առաջ միտքէդ « թո՛ւ, թո՛ւ, միխիր քացախ
վիրէդ թափի խմես, » ըսէ՝ վերջէն ինչ երդում
թէ որ կուզես ըըէ: (Յիմարանոցին մէջ քեզի
համար յատուկ տեղ մը պատրաստուած ըլ-
լալն ալ յիշէ՛:)

5. Ինչ ատեն տունէդ դուրս մարդ ունիս
և կուշանայ՝ գնա զաղան օճախին մէջ բարձր
ձայնով անունը պոռայ և գիտցիր որ պիտի
գայ: (Բոժ. — Զեմ խառնուիր, կը կապեն հա՛:)

6. Մըսափերէդ օսանմիշ ըլլաս և անոր ճամբայ տալ եթէ կուզես՝ նստած աթոռոին տակը քիչ մը աղ ցանէ : (Բոժ .— Կամ խելքդ սալամուռան կոխէ :)

7. Եթէ կարող չես աղը ցանել , աւելը օճախին մէջ դլխիվայր կեցուր : (Բոժ .— Աւելը չի գանաս նէ՝ օճախին մէջ դուն թախլա մը նետէ :)

8. Ա՛ղջիկ , գիշերով հայելիին մէջ շատ մի՛ նայիր , զըսմէթդ կը գոցուի տունը կը մնաս : (Բոժ .— Դուն ալ կարծեմ կամաց կամաց դուրս պիտի ելլաս :)

9. Պատուհանին փեղկերը գոց բոնէ որ տիւշմանիդ լեզուն գոց մնայ : (Բոժ .— Ասանկ երթայ նէ՝ յիմարանոցին դուռը գիշեր ցերէկ պէտք է բաց մնայ :)

10. Թէ աղէկ և թէ գէշ վարդապետի գործի խառնուիս ու անէծք առնես՝ վա՛յ գլխուղ , մեռնելու որ ըլլաս՝ մընչւ աշխարհ-քիս վերջը հող պիտի չի դառնաս : (Բոժ .— Այսինքն մօմեա կամ թութխալ մատէնի կը լլաս :)

11. Մօրքօր ըլլալը չարբմիշ ըլլալ է . գը-լուխտ կարմիր պիւրիւնճիւկ մը առ , ու կէս գիշերին փողոցները ինչ ձայն որ ունիս մօրքօր ունիմ պոռայ ու վաղէ , գիտցիր որ միւս օրը պիտի բժշկուիս : (Բոժ .— Դիտցիր որ միւս

օրը յիմարանոց պիտի նետուիս :)

12. Կանանչեղջէն չըլլի որ կրակին մէջը
նետես , ուեռուզներուն քերուըտուքին ուղրա-
միշ կընես : (Բոժ . . . Ալ ադ խելքովդ շիտակ
յիմարանոցը ույլա՞նը կընես :)

(Շաբաթականիւն)

1887ի Օգոստոս ամսոււ վերջին մօտան .

Տարիքուտ աղջիկները պատիկ երեւնալու
համար առանց թիւռնիկի կարծ շրջազգեստ
կը հագնին և դէմքերնուն թնթուկածութիւ-
նը պէնէքլի թիւլերով կը ծածկեն կոր : Տաս-
ներկու տարեկան կարգ մը օրիորդներ ալ մեծ
երենալու տեսնջով երկայն շրջազգեստ հագ-
նիլ և կընակնին կրկնակի թիւռնիւր կախելը
մօտա են ըրեր :

—

Պէշ քերէ պէշին գաչ էթտիղինի պատալա
սօրմայընճա պիլմէզ պիր հիսապ խօճասընա
շակիրտէրտէն պիրիսի սօրմուշ քի , «Հօճա
էֆէնտի , իքի երւղ օնպէշի եէտիյէ թագսիմ
էթտիմ , կէրիյէ պէշ գալալ , օ պէշի նէ՞ եա-
բայըմ .

Հօճա . . . Գալէմ հագկը տըր . պըա՞գ . . .

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ

[Աժանս Բոժոժիկ եւ Հ'ԱԿ ·]

Պայրամ բաշա 18 Սեպ.

Մեծ պատերազմ զավղավաթից և ֆիտանաց . առաջին ճակատամարտին մէջ քաջութեամբ ինկան հետեւեալը .

200 Օճախ Պամեա

400 » Տօմաթէս

700 » Խապախ

Անյօյս վիճակի մէջ վիրաւորեալը են հետեւեալը .

1000 Քէօք Կանանչ պիտեռ

2000 » Քէմէր և Պօսթան բալժիճանի

4000 » Զալը և Եէր Փասուլեասի

Յուսալի է որ Թուրշուլուխ բալժիճանը
իւր քացախով խառնեալ ազդու միջամտութեամբը քիչ օրէն վերջ տայ այս արիւնչեղութեանց :

Սեպ. 19

Համեստափայլ Թուզը ճամբայ ելաւ , անձրեն բացօթեայ մնացող շատ մը կենդանիներ իր մէջ պարունակելով : Առողջութիւն կը մաղթենք անոնց՝ որք այսքան բարեներով ըեռնաւորեալ ճամբորդուհին պիտի հիւրնկալեն :

Զմեռուկը հրաժարական տուաւ , Խառողը քէն ըրաւ , և իրենց յաջորդ կարգեցաւ մեծապատիւ Պէշպը ըստ Տէօնկէլեան կամ Մուշուլա կուտ-տօլուսիեան :

ՈՐՉԱՓ ԿԱՐԴԱՑՈՂ
ԱՅՆՔԱՆ ՀԱՍԿՑՈՂ

Ուն-գաբանի պղնձագործներէն Թօտօրի
անունով Տրապզոնցի վարպետը քիչ շատ հա-
սարակընթերցման տեղեակ լինելուն՝ երբե-
մըն գիշերները ութը ատար վարպետներ գը-
լուխը հաւաքած՝ Անաթօլի անուն յունատառ
այլ թրքաբարբառ թերթը կը կարդար :

Անցեալ գիշեր ալ նոյնպէս վերոյիշեալ
ու հական գլխապին մէջ Թօտօրի տային Ա-
նաթօլի լրագիրը կը կարդար իր քաղքին
յատուկ արտասանութեամբ և շեշտերով :

«Մահի հալի ուրումինին հիքինճի կունի սա-
պալայուն Տէտէ աղաջ սանչաղունտա Ինօսի գա-
սապասինտա չխտէթլուչ զօրիկչէ բիր հարաքէթի
արզի վուգուֆ բուլմիշ իսէ՝ տէ՝ բիր քիւնա սա-
գաթլիք սուհուր իթմէմուշ տուր :»

— Թախու նիկօլա՛քի, հաճապա բարուրըն
թէքէրէղո՞ւ մու բօղուլտի տէրսուն :

— Քի՞մ բիլուր գա՛րտաշլուգ · բէլքիմ՝ գա-
րայա հօթուրթմուշլար :

— Հօյլէ եա, Տէտէ աղաչինին աշուղու եա-
ման տիր · աշապա հէմչէրուլէրտէն բիր քիմ:
սէ վա՞րմու իմիշ իշունտէ :

— Թախու նէ՞ տիրիլտանուրսունուզ, օրտա
բարուր նէ՞ քէղէր, Տէտէ աղաչինտա հարա-
քէթի արզ օլմիշ տէյօր :

— Բու արա քէախսի նէ՞րտէն քէլմուշ :

- Քի՞մ բիլուր . Փարէլէր իշուն օլմալու .
 — Ե քայմէնի . սօբա էտուն . թիննէյէլում .
 « Իթալիա գումբանեասունուն բիր բարօրույլտ
 դալայի սուլիմանլիյէ կիթմէք ուզրէ . . .
 — Աճապա դաշա՞ ալմիշ օ զալայըն օդ կասինի .
 — Գալայ տէկիւլ , բաբուր տէեօր .
 — Զաթալ սագկալուն բարօրու օլմալու .
 խային • զլինին թէքէրլէքլէրու չօղ եավող
 դաշար . հացան մէլմէքէթաէն քէլտուղ՝ եօ-
 նուզլար իլէ եարիշա չըդառւդ . թօփիսինի
 տա քէշտուդ քէլտուդ .
 — Թա՛խու , սուս օլուն . թիննէյէլում .
 « Աթինատա մէջլիսի մէրուսանի արզ օլինան
 գանուն լայիսալարինի քեամիլէն թաստիքէ տէ-
 վամ իթմէքտէ տուր . վէ . . .
 — Եաղմա եօք . օ գանուն բիզիմ Սօթիրա-
 քինին թամբուրասունա դարշու չըդուշամազ .
 — Հօյլէ . թօղրի տիր . օ քեամիլ ատամ
 քի՞մ իսէ քէլտուն բագալում եարիշա չիգ.ար-
 տալում .
 — Թամբուրա չալմադ թիրաբիզօնլուեա
 վէրիլմիշ տուր .
 — Պաշկա նէ՞ հավատիս վար .
 « Բօթիոէն ալունան հապէրլէրէ կօրէ . . .
 — Թախու թօտօրի տայու . բիդ օ ֆօթինի
 քիյէմէզուդ . օրասինի կէչմէլուսուն .
 — Թօղրի տիր . եմէնուտէն հապէրին վա՞րմու
 — Գա՛րտաշլուդ . ֆօթին տէյուլ . բօթի .
 բիր մէմիէքէթ տուր .
 — Ազնատուք . բիզիմ հուստա ֆօթինին քիմ-

ակղու մէլմէքէթտէն հապիր օլմալու : աման
տայու . հօգու տա տիննէյէլում՝ հա' .

« Բիր վագիթտան բէրու չէ հրիմիզտէ իծրա ո-
լունան պիր հրասիդ տուզաղի հիքեայէ խոէ եօրլար .

— Ա' իս օ սլօյնի ալթունաա դալսսու խոյ-
ունլար . օ խըրսուզլար , խըրսուզլար , քէշէն-
լէրտէ բիզիմ խանա քէլմէյէ չապալամուշլար .

— Է դուզում . պաշկանէ հավատիս վար .

— Արթուդ իլանլար քէլտու . բու ագշամ-
լուդ բու դատար էլվէրուր . թօփիսինի տա
եարըն գօնի գօմշույա սօյէրսունուղ . ագշա-
միսի թօրլանուրուգ՝ տահա հօգուրուդ :

Այս որոշումէ ետքը սաղերնին զարնելով
կ'սկսին երգել ու պարել :

Կայծակ
(ՀՆՉԱԿ)

ԶԵԿՈՅՑ

Կիմանամք թէ մեր բարեկամներէն ոմանք
մինչև ցարդ իրենց Հնչակ չի զրկելնուս հա-
մար մեզի դէմ քիչ մը վշտացած են . ուստի
ի բուժումն նոցա վշտացեալ սրտից արժան
կը համարիմք յայտնել աստանոր թէ , մենք
առաջուց ի վեր մեր կողմէն և ոչ մէկուն
թերթ զրկելու սովորութիւնն ունեցած եմք ,
և այսուհետև ալ չպիտի ունենամք , որուն
կը այս նիւթուն կըսեն , այլ վափաքողաց հրա-
մանին կ'սպասենք , և մէն մի հատորի տը-
պագրութիւնն ամբողջացնելէ ետքը յաջոր-
դին տետրակներուն առաքումը կը դադրե-
ցընենք սպասելով դարձեալ իրենց սովատ կա-

մացը , հետևաբար այն վշտացեալ բարեկամ ներնիս եթէ կուզեն Հնչակի բաժանորդ գըրւիլ , մեր Պատուարժան Բաժանորդաց նման բարեհաճին մեզ իմացնել : Ի սկզբանէ մեր նպատակն է անհորժակ շեղիլ . մեր Հնչակը ականջի անոյշ զարնողին համար է .

Ո՞ր անէցէ ահանձ լեւ լուէց :

Ըստ մեր խոստման՝ Հնչակի կրդ հատորի յաւելուածն է ԽենթերՈՒՆ ԲԺԻՇԿԸ անուն ծիծաղաշարժ կատակերգութիւնը , որ ձեռքէ Յ դահեկանի կը վաճառի :

Հինգերորդ հատորն փոխանակ 44ի՝ 24 տեարակներէ պլիտի բաղկանայ , որոց 12ը ՍԵՒ ԴՂԵԿԻ ԱԽԵՐԱԿՆԵՐԸ անուն ինն արարուածներէ բաղկացեալ բարոյալից թատրերգութիւնը պլիտի պարունակեն . Շաբաթը 16 երեսներէ բաղկացեալ մէկ մէկ տեար հրատարակելով՝ նոյն հատորը Յ ամիսէն պիտի ամբողջանայ , որոյ բաժանորդագինն է 10 դահեկան . Գաւառաց համար թղթատարի ծախքն է Յ դահեկան :



ՀԱՅՈՒԹ

ՑԱՀԵԼՈՒՄԾ

Դ. ՀԱՏՈՐՈՅ



ԽԵՆԹԵՐՈՒՆ

ԲԺԻՃԿԸ

ԿԱՏԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ Ի ՄԻ ԱՐԱՄ



ԹԱՐԴՄԱՆԵԱԼ Ի ԳԱՂԻԱՐԵՆՔ



معارف نظارت جليله سلیمان رخصته طبع او الخشدر



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱՅՐ. ՄԱՆՈՒԷԼ ԱՐԹՈՒՐ

Տնօրինութիւն Սահմակ Նիկողայան

- 1887 -

ԱՆՁԻՆՔ

ՄԵՐԼՈ

ՏՅԱՆԱՄԱԽԱ
ՕՎՐԵ
ԳԼԵՄ
ՄԱՐԻՒԹ
ԵՐԵՔ

ԲԺՇԿ

ԲԺՇԿԻՆ ԱՊՋԻԿ

ՍԱԼԱՌՈՒՀԻ

ՏԿԱՎՐԱԾՆ Է ԼԻՇԿԻՆ ԱՌԵՆԸ

ԽԵՆԹԵՐՈՒԻՆ ԲԺԻՇԿԸ

Զորս կողմէն դռներով սենեակ մը

ՏԵՍԻԼ Ա.

ԴԼԵՐ և ՄԱՐԻԼՅ

Վայսաբույզ բացուեցա միջնին Գլէւ սեղանին առջև
նոսած է. իսկ Մարինին խոչք դռնեա ին օդուն :

Գլէ . Մարիէթ, ժամը քամի՞ն է արդեօք :

Մար . Սրահին ժամացրցը հիմայ վեց զարկաւ,

Գլէ . Ա՛ն մասկիթ, իմաստ տաք աղբիւրներէն վերագործնէո ի վեր զգացած արտօնութիւնո չեմ իրնար բացատրել :

Մար . Բայց ի՞նչ պատճառու օրինող, կարծեմ դաշնակնէո զարնելով կրնաք հանդիսա ժամանակ անցունել,

Գլէ . Երդերէ ալ կը ձանձբանամ :

Մար . Լաւ, բայց միթէ Բօլօնիսի անսառը եւ թաք պատիք, չէ՞ք կրնար զրօնուալ .

Գլէ . Ջրոսանքէ ալ զզուեցայ :

Մար . Եւ փառք յաւիտեանս ամի՞ն : ուրիշ ի՞նչ մայ որ ըսեմ, ուրիշն գեղեցիկ եղիսասագի մը հետ զբօսնեցէք :

Գլէ . Մինչև ցորդ սիրոս գըաւող մը չըտայ :

Մար , Զարմանալի՛ բան, իմաստ աղբիւրները գտնուած ստեննիդ ձեր սրտին ու բնութեանը յաշմար մէկը չիցա՞ք գտնել :

Գլէ . Մարիէթ, դռնի խե՞նիթ ես ի՞նչ ես .

Մար . Ներեցէք օրիորդ , ա'լ խենթ չեմ:

Գլէ . Առաջ ալ խենթ չեմ:

Մար , Առաջները ձեր հօրը հրամանին անհնազմութ չդտնուելու համար խենթ էի , որովհետեւ հայրերնիդ ինքզինքը առաջին կարգի խենթերուն բժիշկը կարծելով միշտ կը պարծենար , ես ալ զինքը իւր արհեստին մէջ յառաջացնելու և փայլուն անուն մը վաստիցնելու համար առաջնուց խենթ ձեւացայ :

Գլէ . Ո՞հ , ի՞նչ գժուարին արհեստ , մարդ այն խենթերուն մէջ ի՞նչպէս կրնայ ժամանակ անցնել

Մար . Ընդհանրապէս ինքզինքը ամենին խելացի կարծող մարդը ամենին աւելի խենթ է :

Գլէ . Փառք Ասուուծոյ , որ մենք այն տեսակ խենթերէն ապատ ենք :

Մար . Ճշմարիտ է . և հայրերնիդ ալ անհանդիսաւ ընող բանը միթէ ասիկայ չէ⁹. Խօմ խենթ ձեւանալս ալ իւր իւր սիրով գրաւելու համար էր , խեղճ մարդը իսմ խենդութեանս հաւտալով սկսաւ խել մը գեղեր չինել , հիմա ալ , իբր թէ իւր ձեռք առած միջոցներէն և տուած գեղերէն աղբկցոյ , ուրախութենէն ամսականս աւելցուց :

Գլէ . Այս , աշխարհիս մէջ իւր գեղերէն ու արհեստէն ի զատ ուրիշ բան մը աչքին չերևալ , առ այժմ հօրս հետ սիրով ենք , մինակ անցեսալ օր էմսի ջուրերը գտնուած ատեննիս ինձ պատուհած մէկ գէպքը պատմելէս՝ քիչ մը նեղացաւ :

Մար . Ի՞նչ գէպք էր այն :

Գլէ . Քեզի չի վերաբերիր :

Մար . Իմ միտքս եկածը այն երխուասարդ պա-

րոնն է, որոյ գործածած դեղերը ձեր հօրը գործածած դեղերէն աւելի կ'ազդէ սիրահարեալ օրիորդաց :

Գլէ . Մարիէլթ .

Մար . Օրիորդ, ահա հայրերնիդ կուգայ, և շատ ալ մտմտուքի մէջ է :

ՏԵՍԻԼ Բ .

Նոյնք և Բժիշկ

Բժի . (Ծառայից) Տուած պատուէրներուս աղիկ ու շաղութիւնն ըրէք, չըլլայ որ սպանեօներուն քովէն հետանաք, վերի տակառները միշտ լեցուն պահեցէք ջրով, կարելի է խենթ մը կը բերեն և պաղ ջուրը կոխել հարկ կըլլայ . հասկցաք, ահա այսչափ, հիմայ կրնաք գործերնուդ երթալ :

Գլէ . Բարի լոյս, հայր իմ .

Բժի . Բարիլոյս աղջիկս : Մարիէլթ, հիւանդ մը կամ խենթ մը բերի՞ն,

Մար . Ոչ տէր իմ, մէկը չերեաց :

Բժ . Զարմանալի՛ բան, այս հիւանդ ութեան համար ունեցած վարսեառութիւնն ամենեւին ուրիշ մէկը չունի. խենդ մը իր գլխուն մազերէն բռնեցի՞ր մի, ամենէն առաջ կակացուցիշ և ամոքիչ զեղեր գործածելու է, եաքը արիւնը դլուխը ցատկելով՝ քիթը, ականջները և աչուշներուն մէջը կարմիր սկսելուն պէս՝ անմիջապէս վրան յարձակելու, քիթը և կամ ականջները խածնելու է :

Աստուծոյ հրամանաւը և արհեստիս զօրութեամբը Յ վայրկեան չանցած բժշկութիւնը կը գտնայ :

Ահա այս ականջ խածնելը բժշկութեան վերջին

միջոցն է : Ամերիկացիք իմ՝ այս ականջ խածնելու կանոնս կենդանեաց վրայ կը գործածեն եղեր բայց ևս մարտկանց վրայ փորձելով, վերջապէս յաջողեցայ, և օրինակներէս մէկն իմ Մարիէթ ըսպասուհիս է :

Մար. Ի՞նչ կը հրամայէք տէր իմ.

Բժի. Ամենեւին վրայէն ալ չի ցուցներ ինչ աստիճանի ուժով ըլլալը, սա՝ բռնածը կը ըրցը՝ ցնէր, ամեն բան տակն ու վերայ կընէր. նախ կակտող բանեցի, նուագարանին անոյշ ձայնովը զինքը զբոսնեցուցի, որովհետև նուագարանը մարդու ջղերուն թուլութիւն կուտայ :

Մար. (Մէկուսէ) Առաջին կարգի խենդը ինքն է :

Բժի. Ե՛ս, այս, ևս վասիաքեցայ որ պրակաստ փայլ տունու և վերջապէս յաջողեցայ :

Մար., (Նոյնուկո) Կամաց կամաց սկսաւ փախցնել,

Բժի. Մարիէթ, Պաթիաթէնի խմացուը որ կառ քըս սրատրաստէ : (Մար Տ. Ք. Բ.)

Գլէ. Հայր իմ, այս օրեւրս սրտնեղութիւն մը կդռամ :

Բժի, Առջնու, հազար անգամ ըսած եմ քեզի թէ սրտնեղութիւն մը ունեցածիդ պէս սա գիւղը կարդալու ես : (Գէտ ճշ բայ)

Գլէ, Բայց սիրելի հայր իմ, այս գիւղը թժը կութեան վերաբերեալ գիրք մը ըլլալուն ես բան մը չեմ հասկնար :

Բժի, Այս, իմ հեղինակութիւնս է, կարդա՛, կարդա՛ որ մտիկ ընենք :

Գլէ, Էօ՛ֆ, սիրտս պիտի նեղացնէ :

Բժի, կարդա՛ ըսինք ա՛ :

ԳԵԼ, (Կարնայ) «Խենդութիւնը ըստւածը մարդուս ըղեղին վեր վար երերալին և անհանգստութիւնին յառաջ եկած հիւանդութիւն մ'է, ասկէ կը ծադի սէր ցաւ, կորուստ, վախ ևայլն ևայլն, կալէսս անուան անուանի բժիշկը իմ քովս դեղադորձանդամ չկրնար ըլլալ»

Բժի, ի'նչ աղւոր գրուածք, քիչ խօսքով շատ բան հասկցնել, այս գրչին տէրը ահա ես եմ, այս դիմէն ծնունդ առած են այս խօսքերը, ասոնք ամենը մեկտեղ մը հաւաքուելնուն պէս կըլլան սէր

Գլէ, Բաել է որ հայր իմ, շատ անդամ սէրէն կը յառաջանայ խենդութիւնը :

Բժի, Այս աւջնկս, խենդութեան առաջին պատճառը սէրն է :

Գլէ. Դարման մը չգտնուի՞ր արդեօք .

Բժիշ. Ասոր դարմանը եթէ բոնուողը կին է, պէտք է որ էրիկ մը առնէ. խակ եթէ մարդ մը է՝ պէտք է կին մը առնէ կարգուի, ասով կը բժշկուի, այս կալէսս անուն բժշկին ըստին պէս, ե՛ս եմ ես՝ ամէն տեսակ հիւանդութիւնները բուժողը, այսինքն սիրահարեալները և . . .

Գլէ. Ա՛հ

Բժի. Արջիկս, ինչ է այդ սրտիդ խորէն քաշած հառաջանքդ, ելեքտրական զօրութեամբ կիմայնէ ինձ թէ՝ ո՛ ֆրանսուա մէրլօ, ու՞ր ես, ինչ եղար :

Գլէ. Ինչ հրաշք, ինչէ՞ն հասկցաք :

Բժիշ. Այս այդ ձայնը ականջիս և սրտիս թէ շերուն գարնուեցաւ չզարնուեցաւ՝ հասկցայ :

Գլէ. Բայց ինչ է հասկցածնիդ .

ԲԺԻՀ. Եւ կը զարմանամ թէ այսչափ տուենէ
՚ի վեր քեզի սիրահարեալ այն երիտասարդը տա-
կուին չերևար , շատ բան շատ բան :

ԳԸԼ. Հայր իմ դուք զինքը չէք ճանչնար , միւ-
սլու ֆրանսուա Մէրլօ պարկեշտ և քաղաքավար անձ
մի , է , ասոր հետ , շատ ալ վախկոտ է , առենելին
չեմ կարծեր որ ինքն անձամբ գոյ և մեր դուռը
դարնէ , իմսի տաք ազրիւրները առաջին անգամ
զինքը դիմաւորելուս՝ երեսս նայելու անգամ չկր-
ցաւ համարձակիլ , բայց իւր իմ վերայ անհուն և
անկեղծ մէր մը ունենալը քաջ դիմեմ :

ԲԺԻՀ. Քեզի բան մը ըսե՞ր էր առաջուց . խօսք
մը բացա՞ծ է :

ԳԸԼ. Թէ պէտե անգամ մը հետը խօսակցեցանք
րայց ամօթխածութենէն չի համարձակեցաւ իւր
սիրուն վրայ խօսք բանալ . ուստի քանի մը ան-
գամներ մօրաքոյրս կանչել տուէր էր ինդիրը ա-
նոր բանալու համար :

ԲԺԻՀ. Եւ մօրաքոյրդ դէմ շի կեցա՞ւ

ԳԸԼ. Բնդ հակառակը օգնեց մեզի .

ԲԺԻՀ. Մօրաքոյրդ ալ առաջին աստիճանի
խենթ մըն է եղեր , անշուշտ օր մը զինքը իմ ներ-
քին և արտաքին կանոնացս տրամադրութեանցը
կենթարկեմ :

ԳԸԼ. Ինչու սիրելի հայր իմ , մօրաքոյրս խենդ
պիտի ըլլայ , Մ. Ֆրանսուայի համար ձեզի բերած
տեղեկութիւններէն դուք ալ գոհ եղաք . միթէ
մոռցաք անոն՞ք :

ԲԺԻՀ. Գնա դա թշուառական ցնդած պառտ-
ւը ինծի կանչէ :

ՏԵՍԻԼ Գ.

Նոյնաք Մարիէթ

Մար. Կառքերնիդ պատրաստ է ամբ իմ.

Բժիշ. Աղջիկո՛ւ . եթէ կուզես ինձ մտիկ ընել, մոռցիր' այդերիտասարդը, մոռցիր' ու ուրիշ մը գլունել նայէ :

Գրլ. Ոչ, հայր իմ ոչ, չեմ կրնար զինքը մոռնալ:

Բժիշ. Թէ որ հրամանիս չհնաղանդիս ետքը սկիտի գղջաս, աշա այստոփ . հիմա գլխարկս տաւր .

Գրլ, (Տայ) Ահաւասիկ :

Բժիշ. Սենեկակո՞ք քաշուէ՛ . ես քանի մը խենդերու ոյցելութեան կերթամ . հոս չեղած ատենս խենդ մը կամ հիւանդ մը բերելու ըլլան նէ՝ աղէ կ մը կապեցէք որ փորձանք մը չելլայ :

ՏԵՍԻԼ Ե.

Մարիէթ (Եպիզ) Ֆրանսուայ և Մէրլօ.

Մար. (Միասի) Քանի մը օրէ ի վէր մեր բժշկութեալ: Մ . Օվրէ Տօդթօրը ընութիւնը փոխերէ . իբր թէ ես խենդ եմ եղեր և ինքը զիս բժշկերէ . կերեկի թէ զիս սկիտի ճամրէ , այն ատեն ու՞ր սկիտի երթամ , տեղ մը չունիմ , մը կը չեմ ճանչար : Ճար մը գտնելու է, ա՛հ, աղէկ միտքս եկաւ, նորէն խենդեցայ ըսելով սկսիմ տանը մէջ եղածները կոտրուել այն ատեն չթողուր որ քովէն հեռանամ: Դրսէն Յայներ աս աղմուկը ի՞նչ սկիտի ըլլայ . արդեօք խե՞նդ մը կը բերեն :

Ֆրան. Դրսէն Ա՛լ առկէ անդին չեմ երթալ :

Մէրլ. (Մահելը) կալիքօրնիա չպիտի երթանք ա՛
ֆրա. Ամս'թ քեզի հօրեղբայր որ զիս անպատա-
ռեցիր :

Մէր. Ի՞նչպէս, անպատառելը ի՞նչ ըսել է, գեռ
հիմա ձեռքերդ քակեցի, միթէ չնորհակալ չե՞ս,
տե՛ս, ա՛լ ազատ ես. (Մահելնի) կաղաչեմ օրէտրդ,
միւսիւ տօքթօռը հո՞ս է.

Մար. Ոչ, դուրս ելաւ :

Մէր. Դուրս ելաւ մի'.

Մար. Բայց չուշանար հիմա կուդայ :

Մէր. Եթէ մինչև առաւօտ ալ սպասել հարկ
բլայ՝ պիտի սպասենք :

Մար. (Մէրը) Սրդեօք պարոնը . . .

Մէր. (Կաժաց) Խենդ է օրիորդ, խենդ է :

Ֆրան. Հօրեղբայր, Ե՞ս մի խենդ եմ, ա՛հ :

Մար. (Եգ + աշ + ելով) Ի՞նչ եղաւ, ի՞նչ ունի :

Ֆրան. Օրիորդ, դուք աղջիկ մ'ունիք այնպէս չե՞ :

Մէր. (Կաժաց ճռ աղբենին) Ահա նորէն փախուց :

Ֆրան. Ներկցէք համարձակութեանս, այն օրի-
որդը կուղեմ ինծի կին առնուլ :

Մէրլ. Խե՛ղն աղայ . . . ինձ մտիկ ըրէ :

Ֆրան. Այս հօրեղբայր.

Մէր. Օրիորդը չկրնար աղջիկ մը ունենալ,
որովհետեւ ինքն ալ տակաւին աղջիկ է :

Ֆրան. Ներկցէք օրիորդ, եթէ գիտնայիք որ-
շա՛փ կը սիրեմ զինքը, խելքս թռուցեր եմ, ա՛հ,
օրիորդ, եթէ այս դործը ձեր ձեռքէն գալու ըլ-
լար՝ անանկ կը կարծեմ թէ պիտի զթայիք ինձ :

Մար. Իրաւունք ունիք պարոն, (Մէրը) ես ա-

Վկ մը որոշեցի երկուքէն որուն խենդ ըլլաւը՝
բայց հիմակու հիմա ձայն չհանենք : Մէնի՞ :

Թրան. Շիտակը, հօրեղբայր, սա ինձ ըրած ան-
պատռութիւնդ ամենելին լուած ու տեսնուած
բան չէ . ձեռքերս կապելով կառք մը նատեցուցիր
և շիտակ բժշկին տունը բերիր, բայց ըսէ տես-
նեմ, ի՞նչ պատճառաւ ասանկ ըրիր, ի՞նչ կայ :

Մէրլ. Մտիկ ըրէ որ ըսեմ, քեզ կառք նատե-
ցուցի՝ որպէս զի շուտ հասնինք, ձեռքերդ կո-
պէցի՝ կառքէն վար չինալու համար, բժշկին տու-
նը բերի՝ բժշկութիւնդ գամելու համար, գո՞չ չի՞ն
թրան. Գոհ չըլլալիս զատ, հիւանդ ալ չեմ:

Մէր. Հիւանդ չէ եղեր, սըլոր նայեցէք :

Թրա. Բայց այս տեկին անունը ի՞նչ է, ո՞ր ենք,

Մէր. Նելի քաղաքը Մ. Օվրէ բժշկին թիւ 47
տունը կը գտնուինք: (Մէկուսի) Խենդերը բժշկելու
համար ինքն ալ առաջին կարգի խենդերէն մէկն է :

Թրա. Բայց հօրեղբայր, ես խենդ չեմ, խելքս
գլուխս է, խօսքս կը ճանչնամ, և քու ինչ ըսել
ուզելդ տակալին չհասկցայ, միտքս հանդարտ և
անեն զգացումս տեղն է, զքեզ ապահովցնելու
համար եթէ կուզես՝ քանի մը ազգու ստանաւոր-
ներ ըսեմ:

Մէր. Քտամթիալիոս անուն փիլիսոփայն ալ ստա-
նուորներ կը չինէր, բայց ի՞նչ օգուտ, խեղճը
խենդ էր :

Թրա, կուզե՞ս որ կատիներէն ճառ մը ըսեմ:

Մէր. Առ այժմ այդ ճառերդ պահէ, ուրիշ ա-
ռեն կը վառես :

Թրա. Կուզե՞ս որ աշխարհագրութեան վրայ
տակնախօսեմ:

Մէր, ի ալ երկան ըրիք ա՛, շատ կը խօսիս
կոր, հիմա քթիդ բերնիդ ապառկ մը կը փակցու-
նեմ

Ֆրա. Բայց մտիկ ըրէ որ առտուընէ ՚իվեր բո-
լոր ըրածներնիս մէկիկ մէկիկ պատմեմ:

Մէր. Գրաւ կը դնեմ թէ պիտի սխալիս:

Ֆրա. Տեսնենք. Ժամը 8 ին սենեակս մնոտք,
զիս անկողնէս հանեցիք. ես ալ գուլսպանելըս հաղոյ

Մէր. Հա՛ քեզ նայիմ, ետեւ ետեւ հագածներդ
շարի՞:

Ֆրա. Աղաչեցիր որ ՚ի միասին դորս ելլենք,
ես չընդունեցայ, դուն ստիպեցիր, ես կատղեցայ,
դուն բարկացար, հիմա ին՞շպէս, կրնա՞ն դարձեալ
խնթե ես ոսել:

Մէր. Համբէրէ, հիմա կը տեսնես:

Ֆրա. Ձեռուըներս կապելու համար ճէրմէն.
օգնեց ձեզի, թշուառականը այս իրիկուն պիտի
վոնոեմ, 13 աւուրչէք առնելիք ունի, ամիսը 30
ֆրանքէն 13 ֆրանք կընէ պահանջը, կը տեսնե՞ն
հիմա միտքս ամփոփ չէ՞՝ ըրած խօսքերուս մէջ
խնթութեան նշան մը կայ՞.

Մէր. Շարունակէ', հիմա կը տեսնաս:

Ֆրա, Բայց սիրելի հօրեղբայր իմ, կաղաչեմ. .
մէկդի թող այդ կատակները, հիմա տեսնողը չտես
նուը ինչ կը կարծէ:

Մէր, ի՞նչ կայ որ:

Ֆրա, Դուն առջնիկ մը ունիս:

Մէր. Ահա դարձեալ փախուց, ես աղջիկ մը
ունիմ եղեր հէ՞՝, ես որ տակաւին կարգուած չեմ,
կենացը մէջ չկարգուող մարդ մը կրնայ զաւկի
տէր ըլլաւ:

Թղթա, Հոգ չէր դուն աղջիկ զաւակ մը ունիս
այն պէս չէ:

Մէր. Ա՛ թռուցիկ փախուկ. չունիմ ըսի, կեցիր
ինձ մտնկ ըրէ, դուն հօրեղբօր որդի ունիս:

Թրա. Ոչ չունիմ,

Մէր. Ես քու հօրեղբայրդ չի՞մ:

Թրա. Այս, մօրս էրկանը եղբայրն ես :

Մէր. Շատ աղջիկ, եթէ ես զաւկի տէր եղած
ըլլայի, քու հօրեղբօր որդինդ եղած պիտի ըլլապ .
ըսել է որ կու հօր եղբօր որդի չունիս, ես ալ զա-
ւակ չունիմ, հիմա հասկցա՞ր թթում գլուխ :

Թրա. Բաւական է զայն գտնելու համար օդնես :

Մէր. Զո՞վ գտնելու համար .

Թրա. Այն օրիորդը՝ ոք այս ամսու իւր հօրտ-
քրոջը հետ էմսի տաք աղբէւրները եկած էր :

Մէր. Անունը ի՞նչ է :

Թրա. Գլուխ .

Մէր. Սյդ Գլէուը ո՞վ կըլլայ կոր.

Թրա. (Փնտրելով) Գլէու նոյն ինքը :

Մէր. Նորէն փախուց :

Թրա. (Ինժնէրէն իօսէլը) Օր մը ըստ իմ սովո-
րութեան զանոնք տեսնելու համար այցելութեան
գայի, հոն չգաայ, գացեր էին, այս գործը գա-
շոյնի վիրք մը բացաւ որտիս, տակն ու վերայ ե-
ղոյ, ինքզինքիս դալով՝ Բարիզ հասեր էի, շոգ ե-
կտոքէն դուրս ցատկեցի, աճասլարանքէս սնառուկս
հոն մոտցայ, կառք մը նատայ, կառավարին շո-
տով վազցու՞ր առուացի, իսկ գարշելի կառավարը
տեղէն չեր երերար, քիչ մնաց որ թշուառակա-
նը պիտի խեղդէի, զիս Գլէուն տունը տար, ըսի

փողոցին անունը և տանը թիւը հարցուց, վերջապէս գրուած թուղթ մը տուի իրեն, մարդն աւ զիս շխոակ քու տունդ բերաւ, ըսել է որ գու աշջնկ մը ունիս, և եթէ ինձի տալ կուզես :

Մէր. (Մեկուսէ) Առ, մըսիւ Օվրէ, եթէ յաջողիս սա տղան բժշկել՝ աշխարհիս մէջ անունդ չի պիտի մոռցուի, օն' օն' սանկ նստէ, նստէ որ հանդ ստանաս :

Ֆրա. Հանդստանա՞լս կուզես, արդէն հանդիս եմ հօրեղբայր :

Մէրլ. Գիտցիր զաւակս թէ ինչ որ ընեմ քեզ՝ քու քասկիդ օգտին համար է . քեզ Մ . Օվրէ բլժշկին տունը բերի, ձեռքէս եկած ծախքը չխընայելով քու բժշկուելուդ կը ցանկամ: Աստուծով, իմ փափաքանացս պիտի հանիմ: վասն զի այս մարդուն համար ամեն տեսն լրադիրներուն մէջ շատ մը գոյասանութիւններ կը կարդամ. ահա քովս ալ ունիմ. (Լրագէր ճ հանելը Հե կարտա) «Օվրէ բժիշկը մեծարոյ ժողովրդին ազդ կառնութէ՝ Նէլի քաղքին մէջ մեծ սրահ մը պատրաստած է բժշկութեան վերաբերեալ ամեն տեսակ գործիներով, ամեն տեսակ հիւանդութիւնը մանաւանդ խենթեթը բժշկելու պատրաստ տեսակ տեսակ նուազարանք . դըրեխներ և այլ ամեն գործիք . . . (Մեկուսէ) հա՛, աս ի՞նչ է . կարծեմ կը քնանայ, զարմանալի բան, 8 օրէ ի վեր քնացած չունիր, բժշկին տունը բերի ցնիքի քունը տարաս, բժշկութեան արհեստին աս ալ մեծ պատիւ մ'է, քնացիր զաւակս, քնացիր . , ալւոր ալւոր երազներ տե՛ս, բժիշկը զալուն ովէս քեզ իրեն պիսի

յանձնեմ. քու պատրաստ ստակէդ 6000 ֆրան-
քը անոր պիտի տամ, դու որ 30000 ֆրանք ու-
նիս անշուշտ մնացեալ 24,000ը ինծի պիտի մնայ:

Ֆրա . (Մոբի Շնելչ) ԱՇ . ա՛յ . ա՛յ :

Մէրլ . Քեզմէ ինծի մնացած ստակը՞ : ըսել կու-
ղեմ թէ՝ սա իմ քեզի համար աշխատածիս փոխա-
րէն . որովհետեւ . . . (Էլ Գնանայ):

Ֆրա . (Մեկնաբ) ԱՇ . , ա՛ն , այս ի՞նչ չոր
սիրտ հօրեղբայր մը ունիմ եղեր :

Մէրլ . Ո՛ն , Աստուած իմ . ոյսօր ալ օդը որ-
շափ տաք կընէ . չեմ գիտեր ինչ կըլլամ . վրաս
թուլութիւն մը կայ . արդեօք քիչ մը քնանա՞մ
կըսէս . (Էլ Գնանայ):

Ֆրա . Արդեօք իրա՞ւ է որ կը քնանայ , կեցիր
ոնդամ մը փորձենք . շի՛շտ , շի՛շտ . չարթնցաւ . . .
հէ փշիւ . ո՛ն Աստուած իմ չարթննար . . . ո՛ իմ
գարշելի եւ թշուառական հօրեղբայրս , հիմտ
ի՞նչպէս ես , զիս խենդի տեղ դնելով բժշկին տու-
նը կը բերե՞ն . հիմտ տեսնենք երկու քներնէս ո՞վ
է իրաւ խենթ եղողը . (Անոր յեռտերը շեռնով էլ
կառէ) ահա եղաւ , ալ հանդիսու եմ:

ՑԵՍԻԼ Զ.

ՆԵՐԻՆՔ և ԲԺԻ՛ՇԿ

Բժի . Ներեցէք պարոնայք զձեզ սոլտսեցնելուս ,

Ֆրա . Սը՛ստ , լոեցէք :

Բժի . Ի՞նչ կայ , ի՞նչ է եղեր .

Ֆրա . Պարոն բժիշկ , սա պատկող մարդը իմ
հարազատ հօրեղբայրս է , զոր կուղեմ ձեր առող-
ջացուցիչ միջնցներուն յանձնել , 40-45 տարեկան
անձ մը , սակայն հողնութենէն և չքաւորութենէն

ձանձրացած, վերջապէս ինտո՞ր ըսեմ, ահա այս
զիմակին Շշջ ինկաւ :

Բժի . Բոլորովին ինքինքը կորանցուցա՞ծ է -

Ֆրա . Աչ տէր, մինակ պօտմառի մը համար է .
երկեմն ասանկ բաներ կը պատահի :

Բժի . Է ի՞նչ է եղեր պատճառը,

Ֆրա . Ահ տէր բժիշկ, չարապտութեամբ կու-
զէ և կը ցանկայ որ հօրմէս աւելի հարստանայ,
այս պատճառաւ գիշեր ցերէկ մտատանջութեամբ
կը նեղուեր . այս մտատանջութիւնը հետղէետէ տ-
ևլնալով վերջապէս խելագարեցաւ, անանկ որ
այսօր իւր ունեցած խենթութիւնը կուզէ դիմո-
ցինին վրայ ձգել, խեղճը անանկ հաւասացուծ է
որ այսօրուան ունեցած խենթութիւնը կուզէ դի-
մայինին վրայ ձգել, կըսէ թէ խենթեցողը ես եմ,
և հիմա ալլաւ գիտեմ որ եթէ արթննայ՝ նոյնը ձե-
զի ալ պիտի կրկնէ :

Բժի . Հոգ չէ, թող կրկնէ .

Ֆրա . Սակայն տէր բժիշկ, նայեցէք որ ձեռ-
քերնուդ չի փախցնեք, որովհետև վտանգաւոր
բան է :

Բժի . Դուք անհոգ եղիք, իմ ծառաներս կրնան
զինքը դիւրութեամբ խելօքցնել :

Ֆրա, Ինչ ընելիքնիդ դուք աղէկ զիտեք :

Բժի , Դուք մէկդի կեցէք որ ես զինքը արկընե-
ցընեմ : }

Ֆրա . Հրամանը ձերն է տէր իմ :

Բժի , (Փետուրով ճը + էնը իւսաւնե) Այս վեասու-
րով պէտք է ամենին առաջքիթը շոշափել :

Մէր. (Փռաւորա) Ե՛. ո՞վ է այն քիթս խառնովը .
Բժի. Բարեկամ, ինծի նայէ, սիրելի բարեկամս ,
բաւական քննցար :

Մէր. (Արքանայ) Այո՛ ... ի՞նչ կայ . ի՞նչ է ան .
ի՞նչու զիս արթնցուցիք ... օ՛, տուտու եղեր է ,
ի՞նչու ալ ջիղերս թուլցեր է . (Կերժիոայ) աս ի՞նչ
է . ձեռուըներս ո՞վ է կապեր, հասկցայ . քննացած
ատենս, հա՛ հա՛, հա, աղէկ կատակ . քու գործդ է :

Թրա. Հինդ վայրկենէն կոկոի սասականալ :

Բժի. Դուք ինծի ձգեցէք, խէնթերու հետ վար-
ուելուն կերալը ես շտա աղէկ գիտեմ, ի՞նչպէս, ը-
սէք նայինք աղէկ քննացա՞ք, ի՞նչ երազներ տեսաք :

Մէր. Դուն ի՞նչ կըսես ալ՛ մարդ, երակ մերազ
տեսնող չիկայ :

Բժի. Մի՛ սրդողիք բարեկամ, բժիշկ մը ամեն
բան հարցնելու ազատ է :

Մէր. Ա՛ դուք բժի՞շկ էք, և զիս ալ խենթ կը
կարծէք . որովհետեւ ձեռքերս խէնթի ոլէս կաս-
ուած է, իրաւունք ունիք, քեզի անամօթ թըշ-
ուառական քեզի, կաղաչեմ Պ . Բժիշկ սա ձեռքերս
քակեցէք որ խնդիրը ձեզի բացատրեմ :

Բժի. (Աչքերսա Ֆելնայելը) Ե՛հ հոգ չէ, կընան
քակուիլ, (Կը + ակէ) Ահա քակեցի, բայց զիս չըս-
տիսէս նորէն կապելու :

Մէր. Ի՞նչ բաել կուզէք, իմ հոս գալս սա եղ-
քօր որդիս դարմանել տալու ե . . .

Բժի. Շատ աղէկ, շտո աղէկ, քիչ մը ետքը ա-
տոր վրայ կը խօսակցինք :

Մէր. Քիչ մը ետքը մի՛, կարծեմ թէ մինչեւ ի-
րիկուն հոս պիտի մնանք, գիտցիք պարսն բժիշկ
թէ եղբօր որդիս :

Բժի . Այս' գիտեմ լսենդ է .

Մէր . Կապուելու արժանի լսէնթ մ'է .

Թրք . (Բժշկն) Արդէն ձեզի չխմացուցի՞ :

Մէր . Ասոր ալ ապացոյց ահա սա չուվանով զինքը կապած էի :

Բժի . Բայց պարո՞ն , այս չուվանով դուք կապուած էիք , դեռ հիմա քակեցի . մոռքերնուդ ելա՞ւ :

Մէր . Իրաւունք ունիք , ես կապուած էի բայց ասոր հետ լսէնթը ե՞ս կը համարուիմ , չնորհ ըրէք տէր իմ որ լսնդիրը ձեզի իմացնեմ . էօ'ֆ . . . ա՛յ չոր սատանայ , ինքը . . . բանը . . .

Բժի . Այդչափ մի՛ շտապէք բարեկամն որ տակնառ վրայ ըըլլաք , արիւնիդ կաւրուի , մինակ հարցումներուն պատասխանեցէք . . . դուն եղբօրորդւոյդ համար կըսես թէ .

Մէր Խէնթ մ'է տէր իմ լսէնթ է .

Բժի . Լու , անոր լսէնդութենէն դուն դո՞՞ էս :

Մէր . (Մէկուսէ) Ասիկայ իրեն ո՞վ իմացուցեր է .

Բժի . Անէրկիւդ պատասխանէ ինծի . եզրօրորդւոյդ այս հիւանդութենէն չազատիլը չե՞ս ուզեր :

Մէր . Մէկուսէ Ա՛հ Աստուած իմ , ո՞վ է ըսեր ասոնք

Բժի . Բնական է որ անոր մեռնելին ետքը ունեցած հարատութիւնը ձեզի պիտի իյնայ , անանկ չէ՞ . և դուք որ միշտ հարուստ ըլլալ կը փափաքիք ...

Մէր . Ոչ տէր իմ , սխալ է ատոնք . (Մէկուսէ) չեմ հասկնար . այս ամէնը ուսկի՞ց գիտէ կոր :

Բժի . (Յըանսսառայն) Ականջին ձայներ կուգայ կոր . . .

Մէր . Այս' կը լսեմ կոր , ի՞նչ ըսելէ , խո՞ւլ եմ ես .

Բժի . Կը գառանձէ .

Մէր . Չեմ զառանձեր , չեմ զառանցեր , սխալ

է ձեր կապահքը Մ ։ Տօքթէօր, իսմ խելքս գլուխս
է, հարցուցէք բարեկամներուս, երակներս զննեցէք
նայեցէք խէնթութեան նշան մը կայ վրաս :

Բժի. Խէնթութիւն լսածդ եթէ այսովէս շուտ
մը երեւան ելլար՝ դարմանն ալ դիւրին կըլլար :

Մէր. Բայց ես խէնթութիւն չունիմ, խէնթ չեմ
չէ՞ք հասկնար, հէսմո ոլիտի ճաթիմ, ալ չեմ դի՞
մանար. (Մարիենբ ունաւլը) ահ, ահա հիմա կը
հասկնանք, օրիորդու դուք Օվրէ այի չէ՞ք :

Մարի. Ոչ պարոն.

Մէր. Հոգ չէ, բայց շիտակը ըսէ՝ մեր երկուքնն
ո՞վ է խէնթ եղաղը. և՞ս մի եղբօրորդիս :

Մարի. Կատաղ կընէք պարոն.

Բժի. Մարիէթա շիտակը ըսէ, այս երկու պա-
րոնները ահասածիդ պէս որո՞ն վրայ խէնթութեան
նշաններ տեսնուեցաւ :

Մորի. Սակայն տէր իմ. . . (Մէլքն ցուցնելը) այս
պարմնը միւս պարոննէն աւելի խէնթ ու խէլառ. խօս-
քեր ըրաւ.

Ֆրա. Եսոր ալ խրաստ տուողը ես չե՛մ ա.

Մէր Ե՞ս խէնթ Եմ. . . կորառէ՛ որնկէց թշուա-
ռական ցնդած դուն ալ:

Մարի. Պարո՞ն բերանդ քեկ ժողով :

Մէր. Կեցիր, մի միայն սա ըսէ՛. Երկուքնս
որուն ձեռքը կապուած էր :

Մարի. Միաքս չէ պարոն, ես ցնդած եմ,

Մէր Միաքդ չէ՞ մի, քեզի թշուառական քեզի :

Մարի. Քանի որ կը փափաքիս՝ որեմն, միւսին
համար անանկ թող ըլլայ (Ֆէնի)

Մէր. Անդին կորսուէ՛ աչքիս տաջեւէն ցնդած շըլեխաղ:

Ֆրա. Հանդիսան եղած առենը հօրեղբօրս խօսքերը մասիկ կըլլուի՛ բայց հիմա...

Մէր. Ո՞վ Սատուած իմ հիմա իրաւ պիտի թայնեմ: Ֆրա. Ա՛հ տէր բժիշկ հօրեղբօրս այս վիճակը տեսնելով խիստ կը ցաւիմ վրան, բայց ու ալ գիտեմ թէ գուք հիւանդներնիդ զաւկը թուղթուղթուղթ պէս կը հոգաք, այս պատճառաւ ձեղի՛ ձանձրութիւն ըլ տալու համար կըկին կրկին աղբաշիլը մէկդի կը ձգեմ, Աստուծով գալ շարթու կուգամ ձեզի հետ նորին տեսնուելու:

Մէր Իրաւ խէնթենալու բան է առ ևս տակաւին կը կարծեմ թէ կատաղ է ըրտծնին:

Ֆրա Շարթու մէջ օր մը կուգսոմ կը տեսնուինք:

Մէր (Պատաշվ) Ի՞նչպէս, կերթայ կոր բանեցէք տէր իմ, մի՛ թողուք, խէնթը ան է, ես խէնթչեմ, սխուլած էք գուք:

Ֆրա. Հանդիսան եղիք իմ սիրելի հօրեղբայրո, հանգիստ եղիք, մի՛ վախնաբ, զքնդ Մ. Տօքթօրին կը յոնձնեմ, Աստուծով պիտի խնամի և խելքդ գըլուխդ բերէ, անհոգ եղիք և առ այժմ մնաս բարեաւ:

Մէր. Ֆրանտուա՛ Ֆրանտուա:

Ֆրա (Մէկն է մէկ) Ա՛հ,

Մէր. Հա՛, ահա հիմայ վախուց:

Բժի. Ի՞նչ եղաք:

Մէր. Կեցէք Տէր իմ, մ'աճապարէք.

Ֆրա. Ա՛հ տէր իմ, գուք ազջիկ մ'ունի՞ք:

Մէր Իմացա՞ք ա, գուք ազջիկ մը ունիք ելեր:

Բժի. Այս' պարոն, բայց ի՞նչ ըսել կուզէք:

Թրտ. Աղջիկ մը ունիք, անունն ալ Գլէս։
Մէր. Ահա հիմա կատարելապէս վախուց։
Բժի. Այս անունը Գլէս է։
Թրտ. Երեք ամիս առաջ հօրաքրոջը հետ էմսի
տաք ազգիւրները դացոծ էր այնալէս չե՞։

Մէր. Հազոր ազգիս, կեցցես ի՞նչ աղէկ ժումա-
նակին իմնիմութիւնը բանեց։
Բժի. Այս պաշտին, այս ամսու աղջիկս էմսի ջո-
րերն էր։

Մէր. Աս ի՞նչ է, զուք ալ մի վախուցիք Պ.
Տօքիթօր. Հիմայ հաւեկցոյ թէ զուք բժիշկ չեք այլ
ոյս առունը եկող խննիմքին միկն էք. կը զարմա-
նամ թէ ի՞նչուն կրթաց որ առոր ովու խննիմքը
հանդիսաւ կը թողաւն։

Բժի. Մտիկ բրէ ինձ բարեկամ, թէ որ խճոք չի
կենաս՝ զըեզ պաղ ջուրին պանեօն կը խօմեն։

Մէր. (Եթ աշուտելը) Ան չէ ամս, իբու առ մար-
դը վասնդաւ որ խննիմ մ'է եղեր։

Բժի. Շարունակեցիք խոռքերնիդ կրազչեմ։
Թրտ. Գիտոյիք ուրեմն աէր բժիշկ, թէ ձեզ աղջիկը
կաթոգին կը սիրեմ, և անանկ կը կարծիմ թէ
ինքն ալ վախաղաքարձարար զիս կը սիրէ եթէ միտ-
քը վիխոծ չէ, հրաման առեքը ինձ որ զայն ինձ
կնութեան առնելու համար ձեզի ազաշեմ։

Բժի. Բաել է որ Մ. Ֆրանսոս Մէրլոն դաք էք։
Մէր. Հէ՛, ի՞նչ կը և, եղրորդիս կը ձանշնոյ
եղեր։

Թրտ. Այս ուրե իմ, ուրեմն ամենին առաջ ա-
նունս խնացնելու է ձեզ։

Մէր. Ի՞նչ ըսաւ, ի՞նչ ըստու։

Բժի. Ներկեցէք Պ. Ֆրանսուա, զի՞ալէք թէ զմեզ
որչա՞փ սպասեցուցիք :

Մէր. Անո՞ր կսպասեն կոր եղեր :

Ֆրա. Հոել է որ ինձի կ'սպասէիք.

Մէր. Ե՛, ասոր վերջը ո՞ւր ալխոի երթոյ.

Բժի. Պարոն, օրիորդ Գլէո, իմ աղջկոս ամեն
բան պատուեց ինձի :

Ֆրա. Բոել է որ զիս կը սիրէ.

Բժի. Կը հարցնե՞ն, միշտ ձեր վրայ կը խօսի :

Բժի. Կը սիրէ եղեր մի՛, ոլ համբերութիւնս հատու-
թրա. Բայց հիմա ո՞ւր է օրիորդը.

Մէր. Իրաւ օրիորդը ո՞ւր է, որւիկայ ինձի ցը-
ցուցէք որ իրեն սպառիկ սիրունիկ քօթօթ մը ըն-
ծայեմ:

Բժի. Հիմա, Գլէ՛ո, Գլէ՛ո.

Մէր. Ահա եկաւ.

Գլէ. (ԵԵՐԵՆ) Ի՞նչ կը հրամայէք հայր իմ, ահա
եկայ :

Ֆրա, Ա՛հ, ինքն է :

ՏԵՍԻԼ Զ.

Նոյնք և Գլէո.

Գլէ. Մէծդ Ասուած, Պ. Ֆրանսուա Մէրլօն
հո՞ս, ա՛հ տէր իմ:

Բժի. Տակն ու վրայ եղուն:

Մէր. Ի՞նչ կը լլան կոր:

Բժի. Ի՞նչ ալխոի ըլլան, ուրախութիւն երջան-
կութիւն :

Մէր. Զգեցէք հողինիդ սիրէք. կատակերգու-
թի՞ւն կը խաղանք :

Գըլ. Մ. Ֆրանսուա, Մ. Ֆրանսուա', ինքզինքնուդ եկէք :

Բժի. Ա՛հ օդնութիւն քիչ մը ջուր, օտը քօլօնեը. քացախ բերէք. շուա ըրէք : Ծառայ+ ճանէն և ջուր բերէն :

Մէր Ան չէ ա', Պ. Տօքթօր սա խաղին վերջը ուր պիտի երթայ.

Բժի Դուն լոէ'.

Մէր. Լոէն ի՞նչ է, ինչո՞ւ պիտի լոեմ.

Բժի. Եթէ հանդարաս չկենաս, զքեզկը կապեմ:

Մէր. Բայց պարոն դուք զիս իրա՞ւ խենթի տեղ գրիք :

Գըլ. Հայր իմ. Մ. Ֆրանսուան աչուցները բացաւ, յուշոբերեցաւ :

Ֆրա. Գլէ՛ս, Գլէ՛ս, ո՞ւր ես. ո՛հ կարծեցի թէ զքեզ դարձեալ կորուսի :

Գըլ. Ոչ սիրելիս, քովդ եմ.

Ֆրա. Ա՛հ Գլէ՛ս, գիտե՞ս թէ որչա՞փ կը սիրեմ զքեզ:

Մէր. Ի՞նչ կըսեն, հոն տեղ ի՞նչ կընեն :

Բժի Զե՞ս տեսնար զիրար կը սիրեն :

Մէր. Կեցցես պէ մարդ, դուն ալ ձդեր ես որ ուզածնին ընե՞ն :

Բժի. Իրենց ամուսնանալուն հաճութիւն ասալէս ետքը ալ ինչո՞ւ չթողում:

Մէր. Ալ հիմա պիտի ձաթիմ, ես հաճութիւն չունիմ, ես չեմ ուզեր :

Բժի. Կամաց կամաց սկսաք համը վախցնել պարոն, կիմանա՞ս . . . Գլէ՛ս աղջիկս, ներս դացէք և Մ. Ֆրանսուան հօրեղբօրդ ներկայացուր :

Մէր. Ի՞՞նչպէս. ի՞՞նչպէս, ներս երթան մի՛.

Բժի. Մ. Մէրլօի հետ քիչ մը պիտի խօսուկցինք
ուստի առանձին թողուցէք մեզ։ Մասանեցուն առանձին կը բանան։

Գլլ. Ներս երթանք տէր իմ, (Կերման բժիշկը Մէրլօ^ւ
կը բանե։)

Մէր. Մի թողուք որ երթան պարոն. հիմա պի-
տի ճամփիմ.

Բժի. Ե՛ ալ մեկնոյուցիք պարոն, վերջացնենք.

Մէր. Ալ կարողութիւնս չմնաց. վերջացնենք սա
գործը.

Բժի. (Մասայէց) Հասկցա՞ք, հիմա կրնաք երթալ։
(Մասայէց Տէխին)

ՏԵՍԻԼ Թ.

Բժիշկ. Մէրլօ.

Բժի. Հիմա դանք ձեզի.

Մէր Բայց կազմէմ չերկնցնենք, ըսելիքնիդ
շուտ ըսեք. վասն զի ժամանակ չունիմ, պիտի
երթամ.

Բժի. (Թէեւը սօնուե) շատ աղէկ, շատ աղէկ.

Մէր. Ի՞նչ է ան. կո՞վ պիտի մորթէք ի՞նչ պի-
տի ընէք։

Բժի. (Մէկուսէ) Ինձի կարդապահութիւն պէտք
է. մի վախնաք պարոն վնասակար բան մը չ'։

Մէր. Նստեցէք որ եղբօրորդւոյս վրայօք խօսիմ
անիկայ քիչ մը խենթ է դուք ալ ելաք աղջիկ-
նիդ անոր տալու։

Բժի. Ո՛չ, ինձի նայէ՛. դուն իմ գործիս չես
կրնար խառնուիլ։

Մէր. Աղէկ ա՛, ազդարարութիւններնուդ մէջ տասնկ բան մը գրած չէիք :

Բժի. Ժիշնէրնուդ այսինքն լաճկոնիդ կոճակները քակէ :

Մէր. Ինչո՞ւ .

(Սիրոց Տոկի հընէ) Մերերար :

Մէր. Ալ համբերութիւնս հաստաւ, հիմա սիսով ճաթիս:

Բժի. Սնառուկին շինուածքին մէջ սրակաս բան մը չեմ տեսներ :

Մէր. Ի՞նչ հրամանեցիք :

Բժի. Մի վախնար բան չեմոյ կոճկըլի :

Մէր. Եթէ ինձ մտիկ կընէք՝ ապջիկնիդ. Եղբօրորդւոյս մի տաք :

Բժի. Կեցիր գլուխող ալ մտիկ ընենք. (Գլուխը և սեղէ)

Մէր. Ա՛յ, ա՛յ, զիս խեղդի՞լ կուզիս մասրդ :

Բժի. (Մայիս ընելին երեց) Խոյտ' ւնկ բայց մէջը սրարապ :

Մէր. Կաղաչեմ Պ. Տօքթօր. ոս գործերէն վառեկու.

Բժի. Կաղաչեմ մի՛ բարկունայք.

Մէր. Ի՞նչսիս չի բարկունամ, հիմա կասապղութենս սիսի ճաթիս, արիւնս սկսու գլուխս ցատկիլ: մտիկ ըրէք ինձ, զիս գոհացնել կուզե՞ս պարոն, էօֆ�', աս ի՞նչ փորձանցի հանդիպեցանք ով Աստուած, ևս ձեր միտքը հաւկցայ, դուք խենթերուն բժիշկն էք, ունեցած արհեստնիդ և վարալետութիւննիդ աշխարհի խմացնել կը փափաքիք, այս պատճառաւ դեմքը նորդը

Խենթ կարծելով փորձերնիդ անսր վրայ կընէք ,
սակայն գիտցած եղիք թէ զուր տեղը կաշխա-
տիք , ինչու որ իմ վրաս խենթութեան նշաններ
չպիտի կրնաք գանել , ուստի եկէք վերջացուցէք
սա գործերը , խօսք կուտամ ձեզի որ խէնթ մը
աղեկցնելու համար որչափ ստակ որ պիտի պա-
հանջէք՝ նոյն գումարը ձեզի կը վճարեմ , ասոր
ի՞նչ կըսէք :

Բժի . Սմեն ինձ եկաղ հիւանդներն ալ այսպէս
կըսեն օձիքնին ձեռքի՛ս ազատելու համար , բոյց
չեն կրնար զիս համուկնել :

Մէր : Բաել է որ զիս բւնտաթետմիւ հոս վար
պիտի գնէք , ալ բաւական է , չուտով եղրօրորդ-
ւոյս քով տարեք զիս :

Բժի , Մի աճապարէք :

Մէր , Սըւոր նայեցէք , մի աճապարէք ալ կըսէ ,
կատաղութենէս ալ հիմտ կը ճաթիմ , թողէք Պ,
Տօքթոր , թողէք որ սընկց կարսուխմ երթամ :

Բժի . Ի՞նչ զարմանալի մարդ ես . ես զքեզ հոս
կապա՞ծ եմ , ազատ ես , կրնաս երթալ :

Մէր . Վերջապէս ճամբու եկաւ , չնորհակալ եմ.
պարոն մեաք բարով , բայց դիացիք թէ այս մար-
դավայել վարմունքնիդ ամենեւին չպիտի մոռնամ ,
(Դառը իւրի՞ց ժո՞ց ժո՞նե) աս ի՞նչ է , դուռը դոց
է . . . աս կողմինը բաց ըլլալու է . ա'յ , առ ալ դոց
է . . . է' պարոն ալ համը փախուցիք , հիմտ քեզ
հնդկահաւի պէս կը փեթեմ:

Բժի . Սրինը սկսաւ եռալ կամացուկ մը ա-
կանջը խոծնելու է :

Մէլ Պ բժիշկ, բաց կըսեմ սա դուռը, պիտի
բանա՞ն ապա թէ ոչ:

Բժի. Բարեկամ, գիտոյիր թէ ես քու աղիկու-
թեսնդ համար կաշխատիմ:

Մէր. Բացէք կըսեմ սա դուռը.

Բժի. Ա՛յ չարաձձի, ի՞նչպէս ընեմ մէյմը ոլոր
ականջը խածնեմ:

Մէր. Կաղաչեմ բացէք սա դուռը.

Բժի. Բայց բարեկամ, (Ականջը էս-ունէ խածնել)
զիս այսպէս առանձին ճգելով կուզէք երթա՛լ:

Մէր. Վրաս մի՛ գար, մի՛ մօտենար, հեռուանց
բարի լցու:

Բժի. Ա՛յ թշուառեկան չկրցոյ խածնել:

Մէր. Սա դուռը պիտի բանա՞ն թէ ոչ:

Բժի. Եկո՛ նախ հաշտուինք:

Մէր. Բայց . . .

Բժի. Դարձեալ չյաջողեցայ,

Մէր, ինչ կայ չիկոյ ամենքն ալ պիտի կոտըր-
տեմ քու գլխէք սկսելով, (Վրան կերեայ աւացէ
պարնէ)

Բժի. Օն ուրեմն քեզ տեսնեմ:

Մէլ, Քանի որ այս հարուածները քեզի օդուտ
մը չունին՝ ես ալ ինչ կոյ չմկոյ պատուհանէն
վար պիտի նետեմ:

Բժի. (Եղե-էն վունք ականջը էս-ունէ) Բայց բարե-
կամ. . .

Մէր. Ա՛յ այ այ.

Բժի. Օ՛հ, վերջապէս խածին

Մէր. Ո՛հ լսելքս գլխէս դնաց, մեռա՛յ, բաց
կըսեմ սա դուռը, (Վրան յարջակի և ճիպը բանդուակի):

ԲԺԻ. Մաթէօ դուռը բաց.

Մէր. Վերջապէս ճամփու բերի, (Դառնը բացուէ
և երիսու հոգի ժամփէլայով) Մէլք Հըւր սրակէն)՝
ո՞հ առ ի՞նչ է. կըտղի կայ ի՞նչ կայ, կորսուեցէք,
կորսուեցէք:

ԲԺԻ. Բովս մի մօտենար,

Մէր (Դրան առջեւ երթալիք) առաջ դուք հրամ-
մէցէք անցէք:

ԲԺԻ. Ես խմ տուշու կը դառնաւիմ, դուք հիսք
էք դուք հրամմեցէք, սու ոչիլէ վրայիս ա՛ռ:
(Կեզնան շառայէց հետ:

ՏԵՍԻԼ Ժ.

Ֆրանտուա, Գլէո.

Ֆրա. Այս սիրեցնալը իմ Գլէո, իմակ տաք տղ-
բիւրները ձգել երթալնիդ. իմ վրաս խորին տղ-
պաւորութիւն յառաջ բերաւ, այնպէս որ քու
սիրող ստատկութենէ երկայն և վտանգուոր հի-
ւանդութենէ մը ետքը ինքզինքս կորոնցուցի, ոչ
հօրերնուդ անունը գիտէի և ոչ բնակած քաղաք-
նիդ, սակայն ամեն դէմս ելլովին զձեզ կը հար-
ցընէի, ո՞հ Գլէո որքան գժուարին բան է խենթ-
ըլլալը:

Գլէ. Բոել է որ յիրտի հիւանդ էիք:

Ֆիա. Անշոշո, սիրոյս ստատկութենէն:

Գլէ Գիտէ՞ք ամենէն աւելի ի՞նչ բանէ կը վախ-
նամ, մի գուցէ հիւանդութիւններնուդ հետ սի-
րոյդ կըակն ալ մարի:

Ֆրա Քաւ լիցի, ես միշտ զքեզ սլիտի սիրեմ և
ոլաշուեմ:

Գլէ Խիստ բարի, բայց հօրեղբայրդ ո՞ւր է :
 Ֆրա. Իրաւ հօրեղբայրս ո՞ւր է. զիս հոս առաջ-
 նորդողը նա ինքն էր, թէսլէտև խնդրոյն ինչ ըլ-
 լալը չգիտնալով, ինչ որ է քանի որ անոր պատ-
 ճառաւը դքեզ դժայ՝ ինձ ըրած անպատճութ թեանց
 ամենուն համար կը ներիմ:

Գլէ. Ահա հայրս կուգայ, իրեն հարցնենք:

ՏԶՄԻԼ ԺԱԼ

Նոյնք և Բժիշկ

Ֆրա. Տէր իմ, հօրեղբայրս ո՞ւր է :
 Բժիշկ Հօրեղբայրդ պատղ ջուրէն պանեօն է .
 Ֆրա. Ո՛հ Աստուած իմ :

Բժիշկ Մինչեւ որ տակառին մէջ խօթեցի՝ մօրմէս
 ծծած կաթս քթէս բերնէս եկաւ, վերջապէս խօ-
 թեցի ա', այս' մտաւ, մինչեւ կոկորդը աղաջուրին
 մէջն է, երկու հոգի ալ քովը կայնեցուցեր եմորք
 միշտ դոյլերով ջուր կը լեցնեն գլւսէն ի վար,
 ձեռքերն ալ կապուած է չերերալու համար, բայց
 ամենէն առաջ ականջը խածնել մը խածի պը
 գետնէն երկու կանգուն վեր սկսաւ ցատկուտել,
 սա խեղճ ծերունին եթէ յաջողիմ բժշկել՝ մեծ
 համբաւ պլիսի ստանամ:

Ֆրա. Աղէկ, բայց իմ հօրեղբայրս խենթ չէ:
 Բժիշկ Գնաւ բանդ դուն ալ, զիս առանակի տեղ
 դրիր, ես իմ արհեստա չիյտե՞մ առկէց դատ միթէ
 դու չէի՞ր ըսողը.

Ֆրա , կարծեմ թէ ես ըսածս գիտեմ , քու լիցի , մինակ իմ խօսքիս կարօտ չես , դուք ձեր միջոցները ի գործ դրէք , բայց նոս հիմա ինձ դէմ բարկացած է ,

Բժի . Բարկացած էն ալ խօնք է , փրփրած , կրակ կտրած է .

Ֆրա , Ահ , խեղճ հօրեղբայր ,

Բժի . Ահա կուգայ ,

ՏԵՍԻԼ ԺԲ .

Նոյնք և Մէլօ

Մէլ , Եթէ մէկը ելնէ պալ ջուրի պանեօի խօսք բանայ ինձի՝ կատղած շան մը պէս վրան յարձակելով բզիկ բղիկ պիտի լնեմ :

Ֆրա , Ահ , հօրեղբայր իմ , ներէ ինձ :

Մէր . Քեզի թշուառական քեզի , չուտով սատունչին դուքս ելլանք :

Բժի , Մ'աճալարէք բարեկամ , կեցէք որ խելքերնիդ աղիկ մը գլուխնիդ գայ :

Ֆրա , կեցէք որ խօսինք , մոտածէ՛ անգամ մը հօրեղբայր , կը վայլէ՞ քեզի , իմացայ որ քու շահուդ համար իմ անունս խենթ հաներ ես :

Մէր . Լոէ՛ , լոէ՛ , ատիկայ ո՞լ ապուր կերեր է .

Ֆրա . Իմացայ որ իմ հարստութեանս աչք ունենալնուդ համար . . .

Մէր , Զայնդ քաշէ կըսեմ քելի :

Ֆրա , Եւ կը փափաքիք եղեր որ իմ ողջ եղած

ատենէս սկսիք հարստութիւնս, , ,

Մէր, Դեռ կը մրմուայ, ապուր են կերեր այդ
ըսողները, ձայնդ քաշէ,

Ֆրա, Ոչ, մինչև որ դիա չամուսնացնես՝ չպի-
մի լւեմ:

Մէր, Պ, տօքթօռ, աղէկ դիտեմ որ այս երկու
երխոսսարդները զիրար կաթողին կը սիրեն, ա-
սոնց կարգուելուն ես հաճութիւնս կուտամ:

Ֆրա, Ահ, սիրելի հօրեղբայր,

Մէր; Եյ պամոն տօքթօռ, ըսէ նայիմ, հիմա ալ
լսե՞մթեմ:

Բժի, Ոչ, խելքերնիդ զլուխնիդ է, բայց իմ
արհեստիս և գործած մէթօսներուս շնորհակալ ըլ-
լալով մեծ համրաւ մը վաստկելու համար ինձի ըս-
տորագրութիւն մը տալու էք:

Մէր, Ե՞ս ստորագրութիւն տամ,

Բժի, Ուրիշբանի համար չէ, մինակ բժշկութեանս
փայլ մը տալու համար :

Մէր, Արհեստնո՞ւդ համար, շատ աղէկ, (ժողո-
վարաց) պա՛րոնայք, ձեզ կը ներկայացնեմ խենթե-
րուն բժիշկը միւսիւ Օվրէն, այս արհեստին մէջ
ունեցած յաջողակութիւնը, խենթերը բժշկելու
համար գործածած մէթոսները գովելի են, մանա-
ւանդ այն պաղջուրին պանեօն այս տեսակ հիւան-
դութիւնները անմիջապէս բուժելով, քիչ ատենի
մէջ կապուելու լիենթերը կը խելօքցնէ, եթէ ձեր
մէջէն իրեն հետ առանձին դէմ առ դէմ տեսնու-
երու փափաքող կայ՝ Նոր փողոցին մէջ թիւ 47 տու-
նը ամեն օր մինչև ժամը վեց կրնայ դտնել:

Ֆրա , Բայց սա ալչի մոռնանք ըսել թէ , ինք-
զինքը խելացի կարծողը առաջին աստիճանի խենթ-
է , ասոր հետ մեկտեղ , ի՞նչ խենթեր ունիմ որ ,
շատ մը խելացիները ծախու կառնեն , նմանապէս ,
ի՞նչ խելացիներ ունիմ , որ խէնթերուն ձեռքովը
կը կապուին :

ՎՈՐԱԳՈՅՐԸ ԿԻԶՆԵՒ

ՎԵՐՋ Դ. ՀԱՏՈՐ ՀՆՉԱԿԻ



